ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 345-Ա
« 30 » ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024Թ.
ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին» N 216-Ն որոշմամբ սահմանված թիվ 1 հավելվածի «1. **Վարչատնտեսական մասի համակարգող՝ հանրակրթական ուսումնական հաստատության»** մասի 25-րդ կետով և հիմք ընդունելով Արթուր Ստեփանյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2024 թվականի նոյեմբերի 4-ից մինչև դեկտեմբերի 6-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «ՀՀ Վայոց ձորի մարզի Արտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Արթուր Ստեփանյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Արթուր Ստեփանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը դնել նույն կազմակերպության տնօրեն Մարինե Խաչատրյանի վրա:
3. Աշխատանքի ներկայանալու ժամկետը՝ 2024 թվականի դեկտեմբերի 9-ին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք.Եղեգնաձոր